Հայտարարություն

Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Զորագյուղի Հ. Ղազարյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի <<Մաթեմատիկա>> առարկայի (25 դասաժամ) և <<Առողջ ապրելակերպ>> առարկայի (3 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 14 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026թ. սեպտեմբերի 16-ին՝ ժամը 14:00-ին, Զորագյուղի Հ. Ղազարյանի անվան հիմնական դպրոցում, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, բնակավայր՝ Զորագյուղ, 12-րդ փ. շ.26: Տեղեկությունների համար զանգահարել (093) 46-31- 78 հեռախոսահամարով: